ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2025 թվականի N 1465-Ա

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը, 9-րդ հոդվածի 5-րդ մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանը՝ ընդունել սույն որոշման N 1 հավելվածում ներառված «Կառավարական առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցներն ու ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե):

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը, պրոբացիայի ծառայությանը և քրեակատարողական ծառայությանն ամրացված տրանսպորտային միջոցները հետ վերցնել և ամրացնել կոմիտեին՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ կոմիտեին ամրացված տրանսպորտային միջոցները հետ վերցնել կոմիտեից և ամրացնել սույն որոշման N 3 հավելվածում ներառված մարմիններին:

4. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ կոմիտեին ամրացված տրանսպորտային միջոցներն անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել կազմակերպությանը՝ համաձայն N 4 հավելվածի:

5. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում՝

1) կազմակերպության տնօրենի հետ համատեղ ապահովել սույն որոշման N 1 հավելվածում նշված տրանսպորտային միջոցների նկատմամբ Հայաստանի Հանրապետության անունից նվիրատվության պայմանագրերի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրա հետ կապված, ինչպես նաև գույքի պետական գրանցման (հաշվառման) ծախսերն իրականացնելով կազմակերպության միջոցների հաշվին.

2) սույն որոշման NN 2 և 3 հավելվածներում ներառված մարմինների ղեկավարների հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել տրանսպորտային միջոցների հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրանց պետական գրանցման (հաշվառման) ծախսերն իրականացնելով համապատասխան մարմինների միջոցների հաշվին.

3) կազմակերպության հետ կնքել սույն որոշման N 4 հավելվածում նշված տրանսպորտային միջոցների անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝

պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի կնքման և տրանսպորտային միջոցների տեղափոխման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման կազմակերպության միջոցների հաշվին:

6. Սահմանել, որ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված աշխատանքների կատարման նպատակով սույն որոշման NN 1 և 2 հավելվածներում ներառված տրանսպորտային միջոցները ենթակա են տեղափոխման պետական շարժական գույքի պահառության նպատակով կոմիտեին ամրացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փողոց 79 հասցեում գտնվող պահառության վայր՝ հանձնող կողմի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ